ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Մ. Ավետիսյանի (լիազորագիր, տրված՝ 26.02.2019թ.)

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի ներկայացուցիչներ՝

Պ. Մուրադյանի (լիազորագիր, տրված՝ 04.03.2019թ.)

Մ. Ղարիբյանի (լիազորագիր, տրված՝ 04.03.2019թ.)

Քննելով Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 28.02.2019թ. ներկայացված և

01.03.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/28 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Արֆարմացիա» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 28.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից վերջինիս կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ):

Աճուրդի 22, 25, 31, 42, 43, 44 և 49-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

19.02.2019թ. Աճուրդի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել են հաղթող մասնակիցներ:

22.02.2019թ. ժամը 16:45-ին կազմվել է գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը՝ ընտրված մասնակիցների ճանաչելու վերաբերյալ:

Նույն արձանագրությնա 1-ին կետի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականի 2-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աճուրդը գտնվում է որակավորման փուլում, հանձնաժողովը որոշեց «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը շարունակել թղթային եղանակով, իսկ 1.2-րդ կետի համաձայն՝ առաջարկվել է առաջին տեղ զբաղեցրած մանսակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը գտնում է, որ 19.02.2019թ. թիվ 2 որոշումը վերոհիշյալ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ և այնուհետև որակավորման փուլ անցնելու վերաբերյալ հանձնաժողովի 22.02.2019թ. ժամը 16:45 թիվ 3 արձանագրությունն անհիմն են հետևյալ հիմնավորմամբ.

1. Հրավերի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է 18.02.2019թ. ժամը 09:30-ին

2. ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի՝ պետական կառավարման մարմիններին ուղղված գրության համաձայն՝ 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով առաջացել է ֆորս-մաժորային իրավիճակ և հնարավոր չի եղել ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը, որի հիման վրա 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել վերոհիշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:

3. Տվյալ դեպքում էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրների հետևանքով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդները 18.02.2019թ. ժամը 10:30-ից հետո դարձել է անհնարին, որի հետևանքով Ընկերությունը զրկվել է Աճուրդին 22, 25, 31, 42, 43, 44 և 49-րդ չափաբաժինների հակադարձ աճուրդին մասնակցելու հնարավորությունից:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին աճուրդը 22, 25, 31, 42, 43, 44 և 49-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ի լրումն բողոքի ներկայացված գրությամբ Ընկերությունը խնդրել է նաև չեղյալ համարել վերոհիշյալ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 12-րդ կետը, ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետը:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.03.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 05.03.2019թ. թիվ 09/258 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվել է eauction.armeps.am էլեկտրոնային աճուրդի համակարգով:

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը հրապարակվել է 08.02.2019թ.:

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված՝ 15.02.2019թ. ժամը 09:30:

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը 19.02.2019թ. դրությամբ գտնվել է որակավորման փուլում:

Գնման առարկա՝ դեղորայք և պատվաստանյութեր:

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 19.02.2019թ. նիստի արձանագրության թիվ 6 կետով բողոքի առարկա հանդիսացող 25, 42 և 44-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Արձանագրությունը սահմանված ժամկետում հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 28.02.2019թ. բողոքով ներկայացված ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականի պարբերության տեքստը փոփոխված է, ինչի արդյունքում փոփոխվում է տրված շրջաբերականով Պատվիրատուների հետագա քայլերի մեթոդաբանության իմաստը:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 28.02.2019թ. ներկայացված բողոքով նշվում է, որ 18.02.2019թ. ընթացող բոլոր հակադարձ աճուրդները, սկսած ժամը 10.30-ից չեն գործել, ինչի կապակցությամբ Պատվիրատուն հայտնել է, որ՝ «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ»

ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարը 01.03.2019թ. գրավոր դիմել է 22, 31, 43 և 49 չափաբաժինների մասով կայացած հակադարձ աճուրդի ամփոփման արդյունքում առաջին տեղ զբաղեցնող «Լիկվոր» ՓԲ և «Առնիկա» ՍՊ ընկերություններին, խնդրելով տալ պարզաբանում՝ 18.02.2019թ. ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդին, սկսած ժամը 10:30-ից իրենց մասնակցության հնարավորության, կամ անհնարինության վերաբերյալ: Ի պատասխան, 04.03.2019թ. քարտուղարը ստացել է համապատասխան պարզաբանումներ իրենց կողմից մասնակցության հնարավորության վերաբերյալ:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 28.02.2019թ. ներկայացված բողոքով նշվում է, որ հանձնաժողովի կողմից կայացվել է ընթացակարգի որոկավորման փուլ անցնելու որոշում:

Պատվիրատուն հայտնել է, որ «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի որակավորման փուլը մեկնարկել է ծրագրով, քանի որ 18.02.2019թ. ավարտվել է հակադարձ աճուրդը, իսկ 19.02.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից բավար են գնահատվել մասնակիցների դիմում-հայտարարությունները:

Ուսումնասիրելով 28.02.2019թ. ներկայացված բողոքը, Պատվիրատուն գտնում է, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 28.02.2019թ. ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման՝ հաշվի առնելով հետևյալ հիմնավորումները՝

1. «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասնակիցներին, այդ թվում և «Արֆարմացիա» ՓԲ ընկերությանը հաջողվել է մասնակցել հակադրած աճուրդին և սակարկել գնային առաջարկները.

2. «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 18.02.2019թ. ժամը 14:30-ին հակադարձ աճուրդը ամփոփվել է.

3. «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը գտնվել է որակավորման փուլում սկսած 19.02.2019թ..

4. «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը շարունակվել է թղթային եղանակով՝ հիմք ընդունելով գնումների ոլորտը կարգավորող լիազոր մարմնի կողմից, պատվիրատուներին էլեկտրոնային աճուրդների շրջանակներում 19/02/2019թ. դրությամբ որակավորման, որակավորման շտկման, անգործության կամ պայմանագրի կնքման փուլում գտնվող ընթացակարգերը թղթային տարբերակով շարունակելու

հրահանգը: Նման պարագայում գտնում ենք, որ շրջաբերականով սահմանված՝ որակավորման և հետագա փուլերում գտնվող ընթացակարգերի չեղյալ հայտարարելու պահանջով բողոքը անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե գնումների ոլորտում լիազոր մարմնի կողմից տրված հրահանգները իրականացնող Պատվիրատուներին, այլ լիազոր մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությանը:

19.02.2019թ. մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարությունները գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգում գնահատվել են բավարար, կազմվել է համապատասխան արձանագրություն և սահմանված ժամկետում հրապարակվել տեղեկագրում, ուղարկվել նաև մասնակիցների էլ.փոստերին:

Համաձայն ՀՀ կառավարության 534-Ն որոշման 19-րդ կետի 4-րդ ենթակետի՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը,բայց, հաշվի առնելով ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալի՝ պետական կառավարման մարմիններին ուղղված գրությունը, մասնակիցներին առաջարկվել է որակավորման փաստաթղթերը ուղակել էլ.փոստի միջոցով՝ 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին համապատասխան: Վերոնշյալով պայմանավորված Պատվիրատուն հայտնել է, որ «Արֆարմացիա» ՓԲ ընկերությունը հակադարձ աճուրդի ամփոմփման արդյունքներով ճանաչվել է առաջին տեղ զվաղեցնող մասնակից ընթացակարգի բողոքի առարկա չհանդիսացող թվով 9 չափաբաժիններով, և սահմանված ժամկետում ներկայացնելով բոլոր որակավորման փաստաթղթերը, այնուամենայնիվ բողոք է ներկայացրել նույն ընթացակարգի այլ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու պահանջով:

Հաշվի առնելով վերոգրյալը, և այն հանգամանքը, որ Պատվիրատուի մոտ առկա է բողոքի առարկա հանդիսացող չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակների՝ դեղորայքի և պատվաստանյութերի անհետաձգելի պահանջ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը խնդրել է «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.03.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը.

«Ավռոմիկ» ՍՊԸ-ն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 15-րդ կետի համաձայն հանդիսանալով բողոքով պարտադիր կողմ և պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.03.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 05.03.2019թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/3542-19 գրությամբ դիմել է «Ավռոմիկ» ՍՊԸ-ին՝ խնդրելով հայտնել թե 18.02.2019թ. ժամը 09:30-ից սկսած Eauction համակարգն արդյոք ունեցել է տեխնիկական խնդիրներ, որոնք կարող էին հանգեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 18.02.2019թ. ժամը 09:30-ին նշանակված հակադարձ աճուրդին մասնակցելու (աճուրդը տեղի ունենալու) գործընթացի խաթարման:

Սույն որոշման կայացման օրվա դրությամբ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

4. ԳԲՔԱ-ԱՄ-2019/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

2. Աճուրդի հրավերի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է 18.02.2019թ. ժամը 09:30-ին:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 19.02.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ ամփոփվել են Աճուրդի արդյունքները:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 22.02.2019թ. ժամը 16:45-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան շրջաբերականը, որոշվել է Աճուրդը շարունակել թղթային եղանակով:

5. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 28.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշվել են Աճուրդի արդյունքներով ընտրված ճանաչված մասնակիցները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 28.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի 05.03.2019թ. թիվ 09/258 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 13-րդ կետի համաձայն՝ աճուրդն

սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի հրավերի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է ***18.02.2019թ. ժամը 09:30-ին***:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 19.02.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ ամփոփվել են Աճուրդի արդյունքները:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 22.02.2019թ. ժամը 16:45-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան շրջաբերականը, որոշվել է Աճուրդը շարունակել թղթային եղանակով:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 28.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշվել են Աճուրդի արդյունքներով ընտրված ճանաչված մասնակիցները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատվիրատուներին ուղղված շրջաբերականով հայտնել է, որ 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով մի շարք կազմակերպություններ չեն կարողացել մասնակցության հայտ ներկայացնել գնման ընթացակարգերին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և այլն:

Նույն գրության 1-ին կետի համաձայն՝ ***19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոհիշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:***

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ ***նվազեցված գները ներկայացնելու գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշելու հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը:***

Նույն կարգի 12-րդ կետը սահմանում է, որ հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ մինչև աճուրդի ամփոփման համար հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

Ընդ որում քայլը՝ մինչև էլեկտրոնային աճուրդի ամփոփումը՝ մասնակցի կողմից վերանայված և ներկայացված նոր՝ նվազեցված գնային առաջարկն է:

Ուսումնասիրելով Eauction համակարգում «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացքի և արդյունքների, այդ թվում մասնակիցների կողմից ներկայացված նախնական և վերջնական գնային առաջարկներն, արձանագրում եմ, որ մասնակիցների կողմից ներկայացված նախնական և վերջնական գնային առաջարկները համընկնում են և փաստացի տեղի չի ունեցել մասնակիցների կողմից գների նվազեցմանն ուղղված որևէ քայլ, այլ համակարգի կողմից հիմք է ընդունվել մասնակիցների կողմից՝ սկզբանե հայտով ներկայացված նախնական գնային առաջարկները, որոնց հիման վրա որոշվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գնումները և գնումների գործընթացը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Դրա հետ մեկտեղ՝ Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ընթացակարգերի 4 տեսակները, որոնց շարքում առանձնացվում է նաև էլեկտրոնային աճուրդը:

Հաշվի առնելով էլեկտրոնային աճուրդի իրականացման առանձնահատկությունները՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված է «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգով հստակ սահմանվել է էլեկտրոնային աճուրդի իրականացման ընթացքը փուլ առ փուլ:

Տվյալ դեպքում, գտնում եմ, որ Eauction համակարգում առկա տեխնիկական խնդիրների պատճառով խախտվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը, որի հետևանքով աճուրդը որպես այդպիսին տեղի չի ունեցել և գները չեն նվազեցվել:

Դրա հետ մեկտեղ ՀՀ ֆինանսների նախարարությունը շրջաբերականով հայտնել է, որ Eauction համակարգում 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում առկա տեխնիկական խնդիրների պատճառով 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց ***հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոհիշյալ ժամանակահատվածը*** և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ ***հայտարարել չեղյալ***:

Արձանագրում եմ, որ «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 15.02.2019թ. ժամը 09:30-ն, որը համընում է ՀՀ ֆինանսների նախարարության շրջաբերականում նշված ժամանակահատվածի հետ:

Այսպիսով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 34-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված է «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի պահանջները, ՀՀ ֆինանսների նախարարությունը շրջաբերականը, ինչպես նաև հաշվի առնելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ հիմունքներով կազմակերպելու, գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումն ապահովելու անհրաժեշտությունը, գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 28.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին Աճուրդը 22-րդ, 25-րդ, 31-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ և 49-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ